

որոյ զինի վախճանին զազազակ բարձեալ գրէին զազերս որբւոյն թէ Շնորհուկ արարեալ մեզ թողցես զաստուածսն ի Միջերկրեայս եւ մի՛ հեռացուցես գոնէ ի մէնջ ի Սորին Հայս: Դու զի ծանօթս ի վախճանմանէ Տեառն Փիլիպպոսի մինչեւ ցայս վայր խորխտալով խրամատէր զկարգ եւ զկրօն եւ զանուն յազթող ցուցեալ ըստ կամացն (պարսպ): Դու լուար զասող աւետաւոր¹⁾, որ ի Բերիա մեզ տեսաւ ԶՃԱՌԻ (ՌՃԺԿ = 1665) Հայոց թվին, ըստ որում յայտնեցաւ վիշապն Սպանիացոց յաշխարհի, որ քարչէր զմասն աստեղաց բանականաց բնակչաց յանյագ²⁾ յորովայնին, ընդ որ մարտս զինուք եւ բաբանիւք տուեալ վասն անյազթելի մնալոյն. ապա հնարեցին զեղս նորա թովչութեան մաղթանս բազմադիմիս առ ամենալուրն վերառաքել ի սեռն սալից հանեալ դահազիժեցին, որ էր ապացոյց թովչութեան զեղոյդ ազօթից համբերութեան, զոր քարչեցեր ընդ քեւ նուաճեալ: Դու քեզն լուար ի Պուրսա յընթրիս ծերունի ասորւոյն՝ զիւրովին բարբառեալ ասէ. Արեւելեանք զամենայն զեղեցկութիւն ընչից քարչեալ տարան յԱրեւելս եւ արդ տեսեալ զգեղեցիկ կաթողիկոս Հոռմցոց, կամին եւ զայն քարչել տանել յԱրեւելս: Ըստ նախազուշակ իւրում բանի էր կամ եպերումն ընդ նոսա գրգել ի ջան՝ զի մի թողուցուն զինքն ի ձեռաց: Դու զհնար Երուսաղէմին եւ զԻզմիւռնոյ՝ ի Հոռմ գնալն փութալ՝ եւ Պրուսայու զքաղաքացիս պատճառելով տեսեանդ ի բաց. զայն որ ի Մանաստըր արարեալ՝ յորժամ սփոփէի զքեզգ եզրակացուցանել զբանս դարձեալ զեղով համբերութեան, գոչէր ասելով. Ես ձեր հարցն էի Եզրիապար, եւ արդ ի ձէնջ ոչ ոք հարցանէ ցիս՝ թէ յո՞ երթաս. եւ ի մէջ հանդիսի ինձ տայր նախատինս, եւ

1) ատաւոր.

2) յանագ.